Առաջարկություններ

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման

պարզեցված հաշվետվության վերաբերյալ

ՀՀ ֆինանսների նախարարությունում, 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման պարզեցված հաշվետվության (այսուհետ՝ Պարզեցված հաշվետվություն) վերաբերյալ կայացած քննարկումը հաշվի առնելով հայտնում ենք հետևյալը: Սովորաբար, պարզեցված և քաղաքացու բյուջե տերմինները չեն նույնականացվում, և ներառվելիք բովանդակության և թիրախավորված լսարանի առումով տարբեր տեղեկատվություն են պարունակում: Հետևաբար առաջարկում ենք կազմել նաև քաղաքացու բյուջե, իսկ եթե այս պարզեցված բյուջեն նույնականացվում է վերջինիս հետ, առաջարկում ենք հետևյալը:

Քաղաքացու բյուջեի (և պլանային, և հաշվետվողական մասերով) մեջ ընդգրկվող բովանդակությունը որոշելիս առաջնորդվել արժեք փողի դիմաց սկզբունքի դրույթներով: Այսինքն հաշվետվության մեջ ներառել հիմնականում արդյունքային ցուցանիշներ: Մասնավորապես, առաջարկում ենք հաշվետվությունները ներկայացնել երեք բաժիններից՝ 1) ՀՀ պետական բյուջեի եկամուտներ, 2) ՀՀ պետական բյուջեի ծախսեր և 3) ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտ և ՀՀ կառավարության պարտք (պետական պարտք):

ՀՀ պետական բյուջեի եկամուտներ:

Առաջարվող առաջին բաժինը գրեթե համընկնում է Պարզեցված հաշվետվության 14-20 էջերում ներկայացված տեղեկատվության հետ: Այս մասով առաջարկում ենք գծապատկերների թիվը նվազեցնել և թվային տեղեկատվությունը ներկայացնել հիմնականում մատրիցաների՝ աղյուսակների տեսքով, նաև համադրելով դրանք նախորդ երկու տարիների համանուն ցուցանիշների հետ: Օրինակ, ներկայացնել էջ 16-ի տեղեկատվությունը համադրած միևնույն հարկատեսակների գծով հավաքագրումների մասին նախորդող երկու տարիների տեղեկատվության հետ:

ՀՀ պետական բյուջեի ծախսեր:

Պետական բյուջերի ծախսերը ըստ տնտեսագիտական հոդվածների և ոլորտների ներկայացնելուց զատ առաջարկում ենք բոլոր հիմնական ծախսային ուղղություններով ներկայացնել արդյունքային ցուցանիշներ: Դրանք ներկայացնել ընթացիկ ծախսեր և կապիտալ ծախսեր տարանջատմամբ:

Օրինակ, Կրթության և գիտության ոլորտին հատկացվող ծախսերի շրջանակներում իրականացվող ծրագրերի գծով ինչ առաջնային արդյունքներ են գրանցվել: Դրանցից կարող են լինել, ենթադրենք, «Հանրակրթություն» ծրագրի գծով հանրակրթական դպրոցներում ուսանած աշակերտների թիվ, այս ուղղությամբ միջին ծախսը: Նմանապես, կարելի է ներկայացնել «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» ծրագրի գծով համանման ցուցանիշներ:

Ընթացիկ ծախսերը ըստ հիմնական ծրագրային ուղղությունների և դրանց գծով ընթացիկ ծախսեր ու արդյունքների ներկայացնելուց զատ օգտակար տեղեկատվություն կլիներ, ներկայացնել կապիտալ ծախսերը: Այս օրինակի պարագայում, դա կարող է լինել, օրինակ կառուցված դպրոցների քանակը, վերանորոգված կամ վերակառուցված դպրոցների քանակը՝ միաժամանակ ներկայացնելով, թե դրանցից քանիսն են Երևանում և քանիսը մարզերում:

Մեկ այլ օրինակ. Առողջապահության ոլորտի համար կարելի է ներկայացնել թե, ինչ հիմնական ծրագրային ուղղություններով են ծախսերը կատարվել և ինչ քանակի ու ինչ հիվանդությունների բուժման ուղղությամբ են ֆինանսական ռեսուրսները ծախսվել: Ենթադրենք, ծախսվել է որոշակի գումար, որի արդյունքում պետական պատվերի շրջանակում սրտանոթային վիրահատական բուժում է ստացել որոշակի թվով քաղաքացի: Կամ ասենք, պատվաստում է ստացել որոշակի թվով երեխա, որի համար ծախսվել է որոշակի գումար: Այս տեղեկատվությունը կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով շատ հակիրճ: Հիմնական ծրագիրը, ծախսված գումարի չափը և քանակական արդյունքը:

Պարզեցված հաշվետվության մեջ նմանատիպ օրինակ է հետևյալը, սակայն սա կարելի է ավելի հակիրճ ներկայացնել, այսինքն ծախսված գումարը և կենսաթոշակ և/կամ նպաստներ ստացած անձանց թիվը:

Պետական բյուջեի ծախսերի 28.8%-ը՝ 416.6 մլրդ դրամն ուղղվել է սոցիալական պաշտպանության բնագավառի ֆինանսավորմանը: Մասնավորապես՝ 294.7 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները: 130.8 մլրդ դրամ տրամադրվել է նպաստներին, որից 6.7 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված է եղել 528255 կենսաթոշակառու և նպաստառու, որոնք ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնողի դեպքում նպաստներ ստացողներն են:

Պետական բյուջեի դեֆիցիտ և ՀՀ կառավարության պարտք (պետական պարտք):

Առաջարակում ենք պակասուրդի մասին տեղեկատվությունը ներկայացնել ըստ ոլորտների և/կամ ծրագրերի, այսինքն ինչ ուղղություններով են ծախսվել այս գումարները, և որոնք են եղել ֆինանսավորման աղբյուրները, օրինակ վարկ որևէ միջազգային ֆինանսական հաստատությունից կամ ասենք ներքին պետական պարտատոմսեր:

Միաժամանակ, ցանկալի է ներկայացնել Կառավարության պարտքի բաժինը ընդհանուր պետական պարտքի մեջ, քանի որ պետական բյուջեի միջոցով Կառավարության գործառույթների արդյունքում փոփոխության է ենթարկվում պետական պարտքի միայն կառավարության պարտքին վերաբերող մասը (առանց Կենտրոնական Բանկի կողմից ներգրավվող պարտքի):